

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
NATIONAL ACADEMY OF SCIENCES
OF THE REPUBLIC OF ARMENIA

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
YEREVAN STATE UNIVERSITY

ՀԵՐԱՅԻ ՏՈՒՐՅԱԿ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ
ԵՎ ՉԱՐԳԼՕՄԱԿ ՀԵՌԱԿԱՐՆԵՐԸ
ARMENIAN STUDIES TODAY
AND DEVELOPMENT
PERSPECTIVES

Միջազգային համաժողով
Երևան, 15-20 սեպտեմբերի, 2003 թ.
International Congress
Yerevan, September 15-20, 2003



Ձեկուցումների ժողովածու
Collection of papers



ՀԱՅԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԱՐԴԻ ԿԱՅՈՒԹԻՒՆԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ
Անթիլիաս - Լիբանան

Վերջին մի քանի տասնամեակներուն հայագիտութիւնը լայն տարածում սկսաւ գտնել թէ՛ մեր ազգային կեանքէն եւ թէ՛ օտար շրջանակներէ ներս: Այսպէս, համալսարաններ, կրթական հաստատութիւններ, մշակութային ու հոգեւոր կեդրոններ սկսան հայագիտական բաժանմունքներ, ամպիոններ, դասընթացքներ եւ կամ՝ ուսումնասիրութեան կեդրոններ հաստատել, նոյնիսկ մրցակցութեան մէջ մտնելով իրարու հետ: Այս դրական երեւոյթը ողջունելով հանդերձ, կ'ուզենք այս ուղղութեամբ նաեւ Մեր մտահոգութիւնը յայտնել: Պէտք է անկեղծօրէն ընդունիլ, որ նոյնիսկ Հայաստանի մէջ այսօր հայագիտութեան որակը զգալի նահանջ սկսած է արձանագրել: Սփիւռքի հայագիտական կեդրոնները իրենց կարգին կը դիմագրաւեն լուրջ դժուարութիւններ թէ՛ որակի եւ թէ՛ ընդհանրապէս հետաքրքրութեան պակասի պատճառով: Եթէ հայագիտական ուսմանց պարզած ներկայ անկազմակերպ ու աններդաշնակ վիճակը շուտով չբարեկարգուի, հայագիտութիւնը պիտի դառնայ տեղ մը ձեւական կամ պարագայական, իսկ ուրիշ տեղ սոսկ դասապահ լեցնող դասանիւթ՝ կորսնցնելով իր խորքը, որակը ու հմայքը: Արդ, հայագիտութեան վերակազմակերպումը՝ հրամայական ու անյետաձգելի պահանջ է: Հայագիտութեան առաւել կազմակերպման աշխատանքներուն մէջ մեծապէս կարելոր կը նկատենք Հայաստան-Սփիւռք գործակցութեան շրջագծէն ներս՝ հայագիտական ուսմանց կեդրոններուն միջեւ սերտ ու ծրագրուած գործակցութիւնը: Կարգ մը կեդրոններ արդէն Երեւանի համալսարանին հետ որոշ գործակցութիւն յառաջացուցած են: Սպասելի է որ ցարդ գոյութիւն ունեցող գործակցութիւնը աւելի խորանայ, նոր կարելիութիւններու ստեղծումով:

Հայագիտութեան վերակազմակերպումը կ'ենթադրէ անոր *այժմէականացումը*: Ներկայ աշխարհի մէջ տեղի ունեցող արագ ու արմատական փոփոխութիւնները, համաշխարհայնացումի ճամբով արդէն իսկ, թափանցած են մարդկային կեանքի բոլոր մարզերէն ներս: Մասնաւորելով Մեր խօսքը ակադեմական բնագաւառին, դուք որպէս հայագետներ վստահաբար գիտէք, թէ համալսարանական ծրագիրներուն մէջ շարունակ հսկայ փոփոխութիւններ կը կատարուին թէ՛ նիւթերու զանազանութեան ու դասաւորումի եւ թէ՛ գործադրուող նոր մեթոտներու ու մօտեցումներու իմաստով: Հայագիտութիւնը եւս անհրաժեշտ է որ բացուի ակադեմական կեանքէն ներս տեղի ունեցող նոր զարգացումներուն՝ ինք եւս ներքին բարեփոխութեան ու վերադասաւորման ենթարկուելով: Այսպէս, հայագիտութեան մաս կազմող բոլոր տեսակի դասընթացքները, ըլլան անոնք պատմութեան, գրականութեան, մշակոյթին, արուեստին կամ աստուածաբանութեան առընչուող նիւթեր, չեն կրնար այլեւս դասաւանդուիլ նոյն ձեւով, նոյն մեթոտով ու մօտեցումով: Հետաքրքրութիւն ստեղծելու, մասնագիտական մօտեցում որդեգրելու ու

այժմեականացում յառաջացնելու համար անհրաժեշտ է նախ առաւելագոյն չափով օգտագործել թեքնոլոժիին հայթայթած բոլոր առաւելութիւնները, ինչպէս նաեւ կենսական է հայագիտական նիւթերը առնչել ներկայ աշխարհի խնդիրներուն, տազնապներուն ու երեւոյթներուն հետ:

Հայագիտութիւնը միայն դասընթացք չէ, այլ նաեւ ու մանաւանդ **ուսումնասիրական աշխատանք**: Ուել մասնա՝հտութիւն երբ հետախուզական, պրպտողական ու վերլուծական մնայուն ընթացքի մէջ չէ, կը կորսնցնէ իր կենսունակութիւնը ու այժմեականութիւնը: Անցեալին, հայագիտական ուսմանց այսքան կենդողոններ ու կարելիութիւններ չկային. սակայն հայագիտութիւնը ծաղկեցաւ ու ծաւալեցաւ ուսումնասիրական լուրջ աշխատանքներու ճամբով: Անհատ հայագէտներ իրենց գիտական ու բանասիրական լուրջ պրպտումներով հսկայ նուաճումներ արձանագրեցին հայագիտական մարզէն ներս: Արդարեւ, կարելի չէ հայագիտական ուել մէկ աշխատասիրութիւն կատարել առանց յիշելու Գարեգին Յովսէփեանց Կաթողիկոսը, Օրմանեան Պատրիարքը, Տէր Մինասեանց, Տէր Միքէլեան ու Տէր Սկրտչեան եպիսկոպոսները, Մանանդեանը, Աբեղեանը, Աճառեանը եւ Սիրարփի Տէր Ներսէսեանը. օտարներէն՝ Կրուսէն, Կարիթին, Լանկլուան, Լեքլերքը, Թուրնըպիզը եւ բազմաթիւ ուրիշներ: Այս անուններուն վրայ աւելցան ուրիշ անուններ վերջին յիսնամեակին, հայ թէ օտար, որոնց գնահատելի աշխատասիրութիւններով առաւել ճոխացուցին հայագիտութիւնը: Հետեւաբար, պէտք է նոր թափ տալ գիտական-բանասիրական ուսումնասիրութիւններուն: Վերջին տարիներուն Մեր ձեռքը անցած շարք մը աշխատասիրութիւններ, դժբախտաբար չունին սպասուած գիտական որակը ու բանասիրական լրջութիւնը՝ հակառակ ներկայ ժամանակներու ստեղծած լայն դիրութիւններուն հայագիտական ուսման կալուածէն ներս: Արագ գրելու, շատ արտադրելու ու շուտ հեղինակ դառնալու մտայնութիւնը սկսած է տիրապետող դառնալ հայագիտական շրջանակներէն ներս՝ երբեմն անձնական պատճառներէ եւ երբեմն ալ նիւթական մտահոգութիւններէ մղուած: Հայագիտական աշխատասիրութիւնները պէտք է պահեն իրենց մակարդակը: Սա նախապայման է հայագիտութեան զարգացման:

Հայագիտական աշխատասիրութիւններու ծիրէն ներս յատուկ տեղ կը գրաւէ **թարգմանչական աշխատանքը**, որ Ոսկեդարէն սկսեալ հայագիտութեան ամենէն աշխուժ ու կենսական երեսներէն մէկը դարձած է: Բոլորդ ալ ծանօթ էք այն հսկայ թարգմանչական գրականութեան, որու ճամբով թէ՛ մենք հաղորդ դարձած ենք օտարներու աշխարհայեացքին ու մտածելակերպին, տազնապներուն ու ձգտումներուն եւ թէ՛ միաժամանակ օտարները հաղորդ պահած ենք մեր ժողովուրդի մաքառումներուն ու մտածումներուն, «արութեան գործերուն» ու երազներուն: Ուրախութեամբ կ'ողջունենք վերջին մի քանի տասնամեակներուն կատարուած թարգմանչական աշխատանքը, որոնց հեղինակներէն ոմանք վստահաբար մասնակից են ներկայ համագումարին: Հայագիտութիւնը մեր ժողովուրդին համար միայն ինքզինք ճանչնալու ճիգ մը պէտք չէ դառնայ, այլ պէտք է վերածուի նաեւ ինքզինք ճանչցնելու մնայուն ու լուրջ աշխատանքի: Մեր մատենագրական աշխարհին մէջ տակաւին փոշիներու տակ մնացած գանձեր կան, որոնք պէտք է գիտական թարգմանութեամբ օտարներուն հրամցուին: Յաճախ օտար շրջանակներէն ներս մեր հոգեմտաւոր ու մշակութային արժէքներուն փառաբանանքը կը կատարենք, սակայն որքանո՞վ օտարները ծանօթ են մեր արժէքներուն: Այս ուղղութեամբ եւս յատուկ ճիգ պէտք է կատարուի. այլապէս հայագիտութիւնը կը դառնայ ինքնամալտակ:

Յրատարակչական աշխատանքը առանցքային կարեւորութիւն ունեցող տարածքներէն մէկն է հայագիտութեան: Անցեալին, ամենէն խեղճ պայմաններուն մէջ մեր վանականները ու գրիչները, մեր պատուքագէտներն ու դպիրները մագա-

ղաթին ու թուղթին յանձնեցին իրենց հոգեմտաւոր ստեղծագործութիւնը: Չմոռնանք, որ հրատարակչութիւնը նոյնքանով արժէք ունի հայագիտութեան մէջ որքան ստեղծագործական աշխատանքը: Գիրը ու թուղթն է որ մտածումը, յուշը ապրումը, պատմութիւնը կը յաւերժացնէ: Ներկայ աշխարհի ստեղծած հրաշալիք-ներէն համակարգիչը աներեւակայելի դիրութիւններ կ'ընծայէ մեր հրատարակչական աշխատանքներուն: Դժբախտաբար մեր կեանքէն ներս հայագիտական հրատարակչութիւններուն թիւը սկսած է նահանջ արձանագրել: Այս մտահոգիչ երեւոյթին պատճառը, Մեր հայեցողութեամբ, նախ տնտեսական կարելիութիւններու պակասն է, ինչպէս նաեւ հայ գիրքին նկատմամբ հայ մարդուն ունեցած հետաքրքրութեան զգալի նուազումը: Այս ծիրէն ներս հայագիտական ամսաթերթերու եւ տարեգիրքերու հրատարակչութիւնը կը նկատենք հրամայական: Սպասելի է, որ գոյութիւն ունեցող պարբերականները որպէս բովանդակութիւն ու որակ աւելի հարստանան: Նաեւ սպասելի է, որ հայագիտական բնոյթ ունեցող նոր պարբերականներ լոյս ընծայուին թէ՛ հայագիտական կեդրոններուն եւ թէ՛ մշակութային միութիւններուն կողմէ: Հայ մամուլը եւս կարեւոր դեր ունի: Վերջին հաշուով հայ մամուլին դերը սոսկ լրատուութիւն չէ, այլ մեր ազգային, հոգեւոր, բարոյական ու մշակութային արժէքներուն տարածումը: Հայ գիրքին կենսական կարեւորութեան մասին Մենք յաճախ անդրադարձած ենք, Անթիլիասի մէջ Կաթողիկոսարանի կազմակերպած գրքերու ցուցահանդէսներուն առիթով: Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը յատուկ կարեւորութիւն կը շարունակէ տալ հրատարակչական աշխատանքներուն: Անցնող միայն 5 տարիներու ընթացքին Անթիլիասի տպարանէն աւելի քան 50 հայագիտական հատորներ լոյս տեսան՝ երբեմն մեր Ս. Աթոռին մեկեմասութեամբ կամ մեր Ս. Աթոռին հաստատած հրատարակչական հիմնադրամներու ճամբով եւ երբեմն Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան Հայկական Բաժնի նպաստով: Այս շրջագծէն ներս Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան եւ Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան Հայագիտական Բաժնի եւ անոր տնօրէն Դոկտ. Զաւէն Եկաւեանի միջեւ ստեղծուած սերտ ու ծրագրուած գործակցութիւնը մեծապէս նպաստեց հրատարակչական աշխատանքներու ծաւալման: Այս գործակցութեան արդիւնքն է երկու տարիներ առաջ Անթիլիասէն լոյս տեսած Օրմանեանի Ազգապատմի ծաւալուն հատորներու լոյս ընծայումը: Նոյն գործակցութեան արդիւնքն է անցեալ շաբաթ դարձեալ Անթիլիասի տպարանէն լոյս տեսած հայ Մատենագիրներու 13 հատորներու շարքին առաջին երկու հատորներու հրատարակչութիւնը: Մեր Կաթողիկոսարանը ո՛չ միայն յատուկ նայանձինդութեամբ կը շարունակէ հրատարակչական աշխատանքները, այլ նաեւ որպէս գնահատանքի ու քաջալերանքի արտայայտութիւն կարեւոր հրատարակչութիւններէն օրինակներ ծրիօրէն կը տրամադրէ բոլոր մատենագրամներուն, հոգեւորականներուն, մտաւորականներուն, հայագէտներուն եւ ուսուցիչներուն:

Քիչ առաջ Մեր կատարած հպանցիկ մատնանշումները, պարված մտահոգութիւններն ու սպասումները որոշ չափով կապուած են տնտեսական դժուարութիւններու: Այսօր, ինչպէս մեր բոլոր կառոյցները ու մեր կեանքի բոլոր մարզերը, հայագիտութիւնը եւս նիւթական լուրջ դժուարութիւններու դիմաց կը գտնուի: Մեր կեանքէն ներս գործող ո՛չ մէկ հայագիտական կեդրոն ինքնաբաւ է: Իսկ օտար համալսարաններու մէջ հաստատուած հայագիտական ամպիոնները ընդհանրապէս կը գործեն հաստատուած յատուկ հիմնադրամներու եկամուտով եւ չեն կրնար տուեալ եկամուտի սահմաններէն դուրս գալ: Մեր հայագէտներու նիւթական վիճակը ընդհանրապէս խեղճ է թերեւս բացի օտար համալսարաններու հայագէտ դասախօսներէն: Ներկայ սահմանափակ նիւթական կարելիութիւններով կարելի չէ որ հայագիտութիւնը զարգանայ ու յառաջդիմէ: Հայագիտութիւնը մեր բոլորին համար պէտք է դառնայ առաջնահերթութիւն: Չի բաւեր միայն զգացական

մօտեցումներով ու հրապարակային արտայայտություններով հայագիտու-

թեան կարեւորութիւնը շեշտել: Հարկ է գործնապէս մասնակից դառնալ հայագիտութեան կազմակերպման ու աշխուժացման աշխատանքներուն: Հետեւաբար, անհրաժեշտ է որ Հայաստանի պետութիւնը, հայագիտութեան աղբիւր ու պաշտպան դարձած հայ եկեղեցին, մեր կազմակերպութիւններն ու միութիւնները եւ մեր ունեւոր ազգայինները, գործնապէս աջակից դառնան հայագիտութեան հզօրացման ծրագիրներուն: Իրաւունք չունինք պատահականութեան ձգելու հայագիտութիւնը: Մեզի համար նոյնքան կարեւոր է հայագիտութիւնը որքան ներկայ աշխարհին կապուած միւս մասնագիտութիւնները: Իրաւունք չունինք անպաշտպան ձգելու մեր հայագէտները՝ պատահական կերպով երբեմն կարեկցութեան ձեռք երկարելով անոնց: Պէտք է այնպէս ընել, որ հայագէտը իր նիւթական հացը յարելու մասին չմտածէ, այլ իրեն ընծայուած կարելիութիւններու ճամբով կարենայ մեր ժողովուրդի հոգիմտաւոր հացով մեր հաւաքական կեանքը հարստացնել: Արդ, Մեր կարծիքով, հայագիտական այս համագումարը նաեւ պէտք է դառնայ մարտահրաւէր մը ուղղուած ողջ հայութեան, իր բոլոր պատասխանատուներուն ու կառոյցներուն, բարձրագոյն աստիճանի նախանձախնդրութիւն ցուցաբերելու հայագիտութեան նկատմամբ: Այս հաւատքով, վճռականութեամբ ու յանձնառութեամբ կը գործէ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը: